



Բաժնեգին տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքանեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 6

2. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1930

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ, ԿԱՄ ԱՌԱՆՑ ԱՆՈՐ

ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿԶ*

Աստուծոյ հետ կամ առանց Աստուծոյ կը նշանակէ երկինքի մէջ կամ երկինքէն դուրս: Ինչու որ ուր որ է Աստուած, հոն երկինք է: Աստուած ամենուրեք է, հետեւաբար երկինքն ամէն տեղ է: Դժոխքը մեղաւորին սրտին մէջ միայն գոյութիւն ունի: Երկինք եւ Դժոխք երկու տարբեր վիճակներ են, որոնք այս աշխարհի վրայ կ'սկսին բարի կամ չար մարդու մը սրտին մէջ: Մահու ընէ վերջ այս վիճակները կը շարունակուին միւս աշխարհին մէջ: Միակ տարբերութիւնը սա է որ գալիք աշխարհին մէջ արժանիքի համաձայն կատարեալ վարձք կամ պատիժ պիտի տրուի:

Երկինք վիճակ մըն է, ուր մասնաւոր տեղի մը անունը չի կրնար ըլլալ, որովհետեւ Աստուած ոչ մեղքը ստեղծեց, ոչ ալ գէշ կամ չար տեղ մը իր ստեղծագործութեան մէջ. ինչ որ Ան ստեղծեց, բարի է: Դժոխքը վիճակ մըն է որ մեղաւորը անձնական անհնազանդութեամբ իր մէջ կ'ստեղծէ: Եթէ Դժոխքը տեղ մը ըլլար, անհուն Աստուծոյ ամենուրեք էութեան մէկ մասն ալ անոր մէջ պիտի ըլլար, ինչ որ անհաս.

կնալի եւ անկարելի է: Եթէ Դժոխքը տեղ մը ըլլար, մեղաւորը պիտի կրնար հանգստանալ անկէ դուրս ելածին պէս: Սակայն փորձառութիւնը կ'ապացուցանէ թէ Թիարանէ փախչողի մը սիրտը խղճի խայթէ եւ յանդիմանութենէ ազատ չէ: Ուրեմն եթէ նոյնիսկ դատապարտեալ մը Դժոխքէն փախչէր, խնդիր չէ թէ ուր որ ալ երթար, ինքզինքը Դժոխքի մէջ պիտի գտնէր, քանի որ Դժոխքը իր սրտին մէջ է: Եթէ նոյնիսկ երկինք երթար հրեշտակներուն քով, իր մեղաւոր բնութիւնը երկինքը Դժոխքի մը պիտի վերածէր իրեն համար: Ուստի մեզի համար Աստուծոյ հետ, եւ Անոր կամքին համաձայն ապրիլը երկինք է հիմա, ու պիտի ըլլայ յաւիտեանս: Իսկ առանց Անոր՝ ներկայ եւ ապագայ կեանքը Դժոխք պիտի ըլլայ:

Աստուծոյ ներկայութիւնը կ'ապրուի, բայց անկարելի է բաւերով արտայայտել: Ինչպէս որ անուշեղենին քաղցրութիւնը ճաշակելով կը գիտցուի ու չէ թէ պերճ նկարագրականով, նմանապէս Աստուծոյ ներկայութիւնը կը վայելուի անձնական յարաբերութեամբ ու զԱնիկա պաշտելով հոգւով ու ճշմարտութեամբ:

Ինչպէս որ ծովը լեցուն է ջուրով, այնպէս ալ բոլոր տիեզերքը Աստուծոյ ներկայութեամբ: Ջուրին մէջ սուզուողը բոլորովին կը շրջապատուի անով, այնպէս ալ վերստին ծնածը միշտ եւ ամէն տեղ Աստուծոյ ներկայութեան մէջ է:

*) Սատու. Սունաար Սինկի իր ողջութեան ժամանակ մեզի երկու յօդուած ղրկած էր «Բանբեր»ի համար, որոնցմէ մին այսօր կը հրատարակենք: Յօդուածը մեզի ցոյց կուտայ թէ Սատու. որքա՞ն ճկուն էր հասկցնելու իր հեծանոս ազգակիցներուն ճշմարիտ աստուածապաշտութեան էութիւնը: Իր մահու պարագաներու մասին կարգալ «Ջանազան լուրեր»-ու մէջ:

Դարձեալ, ծովուն մէջ հազարաւոր կենդանիներ գոյութիւն ունին, նմանապէս Անոր սիրոյ անսահման ուրիշանին մէջ անհամար կեանք ունեցողներ կան: Ինք, Անսահմանը, մեզ այնպէս կը շրջապատէ որ մենք հոգնաւորներս չենք կրնար գինքը տեսնել: Ուստի Ան ինքզինքը Իր գաւակներուն կը յայտնէ Քրիստոսի միջոցաւ որ աներեւոյթ Աստուծոյ պատկերն է: Անոր համար ցիսուս կ'ըսէ. «Ան որ զիս տեսաւ, Հայրը տեսաւ». ցովհ. ԺԳ. 9:

Երբ մէկը այս իրականութեան համար վկայէ, շատեր չեն ընդունիր, վասնզի մարդուն բնութիւնը մեղքով այնքան խեղածիւրդած է որ մեծ դժուարութեամբ կրնայ ճշմարտութեանց հաւատալ. մինչդեռ նիսալ բան մը առանց դժուարութեան իբրեւ ճշմարիտ կ'ընդունի: Զոր օրինակ: Յաճախ տեսնուած է որ երբ մէկուն վրայով գէշ լուր մը շրջաբերի, հոգ չէ թէ որքան ալ անհիմն ըլլայ կամ անկարելի, մարդիկ կ'ըսեն, «Այո, այս լուրը շիտակ ըլլալու է, եթէ ոչ մէջտեղ չէր ելլեր»: Ընդհակառակը, թէ որ բարի լուր մը երեւան ելլէ, որ եթէ իրական ալ ըլլայ, զոր օրինակ թէ «Այսինչ մարդը բարի մարդ մը ըլլալու է, որովհետեւ Աստուծոյ փառքին եւ մարդոց օգտին համար սա գործը ըրած է», մարդիկ առանց վարանելու կ'ըսեն. «Ասոր մէջ պնշուշտ ծուռ բան մը կենալու է, անպատճառ եսասիրական դրդապատճառ մը կայ»: Եթէ այդ մարդոց հարցուի, ի՞նչ փաստ ունիք թէ առաջին լուրը ճշմարիտ եւ երկրորդը սխալ է», չեն կրնար պատասխանել: Այս կ'ապացուցանէ թէ այս տեսակ մարդիկը ինքնին լաւ չեն, քանի որ չար լուրերու աւելի կը հաւատան, վասնզի իրենց չար բնութեան լաւ կը յարմարի, իսկ բարի լուրեր իրենց սխալ կը թուին, քանզի կը հակասեն իրենց չար բնութեան: Պակայն բարի մարդու մը նկարագիրը ասկէ շատ տարբեր է: Գէշ լուրերու մասին կը տարակուսի, իսկ բարիները կ'ընդունի, վասնզի անոնք կը յարմարին իր բնաւորութեան, որ արդիւնքն է «Աստուծոյ ծնած ըլլալուն». ցովհ. Ա. 11-13:

Կենսատու Տէրը իւրաքանչիւր արարածի կեանք կ'ուտայ մասնաւոր նպատակի մը համար, եթէ այդ նպատակը անկատար կը մնայ, Ան իրաւունք կ'ունենայ այդ կեանքը ետ առնելու, բարձրագոյն նպատակ մը իրագործելու համար, ինչպէս պատահեցաւ Թզնիին, որ արմատէն չորցաւ. Մատթ. ԻԱ. 19: Մառին օրինակով Տէրը, Հրէից եւ բոլոր աշխարհի սորվեցուց թէ անպտուղ կեանքերը Թզնիին նման պիտի կտրուին ու չորնան: Հրէական ազգային պատմութիւնը կը ճշդէ այս ազդարարութիւնը:

Աստուծոյ զաւակներէն հարիւր հազարաւորներ իրենց կեանքը զոհած են ընկեր արարածներու օգտին եւ ուսուցման համար, եւ այսպէս նահատակուելով իրենք կատարեալագործած են Աստուծոյ իրենց համար որոշած ծրագիրները: Պատիւ թէ որ օրինաւոր է մար-

դու մը, որ Թզնիին եւ բոլոր արարածներէն բարձր է, իր կեանքը ուրիշներու բարեօրման համար տալ, ինչո՞ւ համար անիրաւ եւ ապօրինի ըլլայ Թզնիի մը կեանքը առնելը, մարդկութեան դաս մը տալու համար: Անոնց, որոնք կ'առարկեն թէ «Քրիստոս Թզնիին չորցնելու չէր, քանի որ պտղաբերութեան ժամանակ չէր», կ'ըսեմ անոնց թէ «Բարին գործելու համար եղանակ չկայ»: Բարի գործերու համար եղանակը միշտ յարմար է: Ամէն մարդ իր կեանքին մէջ բարի ստուղներ արտադրելով պէտք է լեցնէ այն նպատակը, որուն համար ստեղծուեցաւ: Քանզի միայն այս կերպով է որ երկնային ուրախութեան մէջ Աստուծոյ հետ պիտի բնակի յաւիտեանս:

ԻՆՉՊԷՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԳԼՈՒԽ ԺԴ.

«ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ»

(Շար. 5-րդ ԹԻՒՆԷՆ)

Բարձրագոյն քննադատութիւնը, որ կ'արգիլէ շատ մը քրիստոնէական հաւատալու եւ ընդունելու իրենց ճոխ ժառանգութիւնը Քրիստոսով:

Ոչ ոք արտասովոր իրողութիւն մըն է թէ հակառակ անոր որ Յաղթական կեանքի ճշմարտութիւնը այնքան յստակօրէն կ'ուսուցուի Սուրբ գրքին մէջ՝ Սուրբ գրոց աշակերտներէն շատեր բողոքովին անտեղեակ են անոր: Շատեր որ կատարեալապէս ծանօթ են իրենց Սուրբ գրքին՝ փորձառութեամբ բողոքովին անտեղեակ են այս ճշմարտութեան: Իմ ալ հոգիս վրայ Յաղթական կեանքի պայծառ լոյսը փայլեցաւ երկար տարիներ Սուրբ գիրքը զգուշութեամբ քննելէս յետոյ: Կըրականներ կրկին եւ կրկին ստիպուած են խոստովանիլ, «Մենք այս ճշմարտութիւնը չենք քարոզեր, որովհետեւ փորձառութեամբ անծանօթ ենք անոր»:

Արդեօք ինչո՞ւ մենք այսքան դանդաղ ենք սրտով հասկնալու մէջ: Այս կէտը բացատրելու ամենէն լաւ միջոցն է թերեւս քիչ մը ընդարձակօրէն նկարագրել Աստուծոյ երկու ծառաներու փորձառութիւնը, որոնք երկար ժամանակ Տէրոջը գործին մէջ գտնուելէ վերջ սորվեցան Յաղթական կեանքի վարդապետութիւնը: Ասոնցմէ մին է Հըստըն Թէյլըր, 2-ինաստանի միսիոնարը: Անիկա իր քրոջ գրած նամակի մը մէջ կը պատմէ թէ ինչպէս ինք սրբութիւն փնտռած եւ ինքզինք բողոքովին անկարող զգացած էր զայն գտնելու, հակառակ անոր որ Սուրբ Գրքին էջերը յստակօրէն կը ցուցնեն սրբազան կեանքի մը դադարները: Մտիկ ընենք անոր խոստովանութեան.

«Ես աղօթեցի, ծով պահեցի, տագնապեցայ, պայքարեցայ, որոշումներ ըրի, աւելի ժամանակ տուի Սուրբ Գրքի ընթերցանութեան, խորհրդածութեան աւելի ժամանակ գտնել շունացի, սակայն այս ամէնը ապարդիւն եղան: Ամէն օր, գրեթէ ամէն ժամ մեղքի դիտակցութիւնը զիս կը ճնշէր: Հետեւաբար հարցուցի, ասկէ ազատում չկայ միթէ: Շարունակ կռիւ եւ յաղթութեան փոխարէն յաճախակի պարտութիւն պիտի ըլլայ իմ բաժինս: Կ'ատէի ինքզինքս, կ'ատէի մեղքս, պակայն անոր յաղթելու զօրութիւն չէի կրնար գտնել: Կը զգայի թէ

ես Աստուծոյ զաւակն էի, բայց կատարելապէս անկարող էի իմ այդ արտօնութիւնս իրականացնելու: Կը խորհէի թէ գործնական սրբութիւնը կ'ընդունուէր շնորհաց միջոցներու յաճախակի գործածութեամբը: Կը զգայի թէ չկար բան մը որուն այնքան կը բաղձայի ու այնքան կը կարօտէի որքան սրբութեան: Երբ իմ հոգւոյս տագնապը իր գազաթնակէտին հասած էր, ինծի եկած նամակի մը մէջ գտնուած նախադասութիւն մը պատճառ եղաւ որ աչքերս բացուեցան ու Աստուծոյ հոգին ինծի յայտնեց թէ **ՅԻՍՈՒՍ ԵՒ ԵՍ ՄԷԿ ԵՆՔ**:

Ահա նամակը: «Հաւատքը կը կազմէ ջրանցք մը, որու մէջէն Քրիստոսի լեցունութիւնը առատօրէն հոսելով չոր ձիւզը կը վերածէ պղղատու բուսի մէկ մասին: Ամենէն սուրբ մարդը այն է, որ ամենէն առատօրէն կ'ընդունի Քրիստոսի կեանքը իր մէջ: Թերի հաւատքն է որ արգելներ կը հանէ մեր ոտքերուն առջեւ եւ բազմաթիւ անկումներու պատճառ կ'ըլլայ: Ոչ թէ կուրիւ ու պայքարիւ, այլ **ՄՆԱԼ**: Իրեն նայիւ, Իրեն վստահիւ թէ կարող է **ՀԻՄԱ** պետք եղած զօրութիւնը տալ, վստահիւ թէ Ինք պիտի յաղթէ մեր մէջ գտնուած ամէն ապականութեան, հանգչիւ մեր կատարեալ փրկութեան ուրախութեանը մէջ, որուն գիտակից ենք, փրկութիւն մը որ մեզ ամէն մեղքէ կ'ազատէ, յօժարիւ որ Ինք իրապէս ըլլայ նախապատիւը ամէն բանի մէջ: Ասիկա **ՆՈՐ ԲԱՆ ՄԸ ԶԷ**, սակայն **ԻՆՇՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ** է: Ինծի կուգայ թէ անծայրածիր ծովու մը մէկ ծայրը միայն կը գտնուիմ: Քրիստոս ինծի համար տառապէս **ԱՄԷՆ ԲԱՆ** ըլլալով իմ ծառայութեան միակ զօրութիւնը եւ անփոփոխ ուրախութեան միակ հիմն է Ան: Հաւատքը ինչպէս կ'աւելնայ: Մի-միայն միտք բերելով Յիսուսի լեցունութիւնը եւ Անոր լեցունութիւնը **ՄԵԶԻ ՀԱՄԱՐ**: Անոր կեանքը, Անոր մահը, Անոր գործը, Անոր անձը, որ Իր խօսքին մէջ մեզի յայտնուած է, անդադար մեր խորհուրդներուն առարկայ ընելով: Կը թուի թէ մեզի ամբողջ պետք եղածը ոչ թէ հաւատալու ջանալ է, կամ մեր հաւատքը աւելցնելու ձգտիւ, այլ մեր աչքերը դարձնել Հաւատարիմին, կատարելապէս հանգչիւ Միեցեալին մէջ թէ ներկայիս թէ յաւիտեանականութեան համար: Ասիկա ինծի նոր բան մը չերեւիր, սակայն բան մըն է որ մինչեւ հիմա սխալ ըմբռնած էիմ:

Այս էր նամակը եւ Հըտսըն թէյլըրի ուշադրութիւնը գրաւող նախադասութիւնն էր վերջին նախադասութիւնը, որ կ'ըսէր՝ «Կը թուի թէ մեզի ամբողջ պետք եղածը ոչ թէ հաւատալու ջանալ է, այլ մեր աչքերը միմիայն դարձնել Հաւատարիմին»:

Այս նամակները մանրամասնօրէն մէջ բերինք մասամբ անոր համար, որ անոնց մէջ ամփոփուած կը գտնենք բոլոր այն ճշմարտութիւնները, որ այս էջերուն վրայ սորվեցնել ջանացինք, սակայն մասնաւորապէս ցուցնելու թէ Աստուծոյ այս երկու մարդիկն ալ կը խոտովանին թէ այս վարդապետութիւնը **ՆՈՐ ԶԷ**, սակայն երկուքն ալ թերացած էին զայն ըմբռնել հակառակ անոր որ շերմապէս կ'անձկային յաղթական կեանք մը ուղղելու: Նաեւ ես երբ յետադարձ անհարկ մը կ'ուղղեմ անցեալ կեանքիս վրայ, չեմ տեսներ բան մը որ զիս այնքան զարմացնէ որքան այս Յաղթական կեանքի ուսուցումը տեսնելու, հասկնալու եւ ըմբռնելու մէջ թերաւալ՝ հակառակ անոր որ նոր չէ եւ այնքան պարզօրէն կ'ուսուցուի Սուրբ Գրքին մէջ: Արդեօք ինչո՞ւ: Ինչո՞ւ այնքան նուիրուած Սուրբ Գրքի աշակերտները կը թերանան Յաղթական կեանքը իւրացնելու կամ նոյն իսկ զայն փնտռելու մէջ: Ես

այնպէս կը զգամ թէ շատեր քննադատելով կը կարդան Սուրբ Գրքը: Թէեւ զայն կը կարդան նուիրական եւ ակնածական զգացումներով, սակայն առանց Սուրբ Հոգիէն լուսաւորուելով: Շատ մը Սուրբ Գրքի աշակերտներ բարկանալով պիտի ուրանան զայս, սակայն մենք այնպէս կը զգանք թէ այս է իրողութիւնը: Մենք չենք ամբաստաներ որեւէ մէկը, ըսելով թէ գիտակցաբար կը մերժէ Սուրբ Հոգիին օգնութիւնը, այլ մեր գաղափարն է թէ անոնք ինքզինքնին կը խաբեն կամ թէ կը խաբուին:

Նոյն իսկ Եպիսկոպոս Մուլ, որ սրբազան կենցաղավարութեան մը տէրն էր, կը խոստովանի թէ ինք աստուածաբանական դպրոցի մը նախագահն ըլլալով հանգրձ, չէ թէ միայն թերացած էր այս վարդապետութեան նշանակութիւնը ըմբռնելու մէջ, այլ վստահ եղած էր թէ անիկա սխալ եւ ոչ-սուրբ գրային ուսուցում մըն էր, մինչեւ որ օր մը իրեն վրայ ալ ծագած էր լոյսը: Մեր ընթերցողներէն շատեր կը յիշեն թէ ինչպէս Եպիսկոպոս Մուլ Սկովսիս այցելած միջոցին եկած էր այս ճշմարտութեանց տեսութեան: Եւ ամբողջ աշխարհ գիտէ թէ ինչպէս անոր գրքերը լեցուն են այս ճշմարտութիւնով:

Ինծի կը թուի թէ մեր կուրուսթիւնը հետեւեալ կերպով կարելի է բացատրել: Պողոս առաքեալ կ'ըսէ. Գիրք կը սպաննէ, բայց Հոգին կ'ապրեցնէ: (Բ. Կոր. Գ. 6) Եթէ Սուրբ Հոգին մարդ, հապա այն ամէն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ՝ (Մատթ. Գ. 4) Զէ թէ անցեալին մէջ Աստուծոյ բերնէն ելած է, այլ ներկայիս Աստուծոյ բերնէն կ'ելլէ: Այսինքն Սուրբ Հոգին կ'առնէ գիրք որ կը սպաննէ ու կը լեցնէ զայն կեանքով ու զօրութեամբ ու այսպէս Սուրբ Գրքին միջոցով՝ Աստուծոյ վստահողները շփման կուգան Անոր հետ: Աշակերտները շատ դժուար բաներ լսած էին որ չէին հասկնար, ուստի Քրիստոս կ'ըսէ՝ «Երբ Ինք, ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի, վստահի ոչ թէ Ինք Բնէ պիտի խօսի, հապա ինչ որ լսէ զայն պիտի խօսի. (Յովհ. ԺԶ. 13): Հիմա մենք կ'ապրինք այն նոյն գրուած խօսքովը, զոր Տէրը մեզի կը խօսի ներկայիս Սուրբ Հոգիին միջոցով: Դժուար տակաւին Աստուծոյ բերնէն կ'ելլէ Սուրբ Հոգիին միջոցով:

Նիկիական հանգանակին մէջ Սուրբ Հոգին կը կոչուի «Տէր եւ Տուիչ կեանքի»: Սուրբ Հոգին է որ Կուսայ մեզի Յաղթական կեանքը, լուսաբանելով մեզի գրուած խօսքը եւ պարզեցնելով մեզի մեր մէջ բնակող խօսքը, այսինքն Քրիստոսը: Քրիստոս կը ծնի եւ կը բնակի մեր մէջ Սուրբ Հոգիին գործունէութեամբ:

Շատ անգամ կը հարցնեն ինծի. թէ Յաղթական կեանք Սուրբ Հոգիով լեցունի՞ կը նշանակէ: Ինչ է Սուրբ Հոգիին գործը: Անիկա կուգայ Իր բոլոր լեցունութեամբ ոչ թէ Իրեն համար խօսելու, այլ Տէր Յիսուս Քրիստոսը յայտնելու եւ մեզ ամէն ճշմարտութեան առաջնորդելու: «Անիկա գիտ պիտի փառաւորէ», կ'ըսէ Քրիստոս, «Վասնի իմինքն պիտի առնէ ու ձեզի պատմէ»:

Այս ամենուն մէջ նոր բան մը չկայ, քանի ինծի անհամբերութեամբ եւ գրեթէ տրտնջելով: Սակայն այսպէս պրծա-յայտնողներուն ձայնին շեշտէն յայտնի է թէ ինչքա՞նչ յօժա-րակամութիւն չունին այս հին վարդապետութեանը իրենց խոս-ցնելու եւ անով փոխուիլ փորձելու: Դժուարութիւնը հոր է որ շատեր, որ Բարձրագոյն քննադատութեան համար կը ցաւին,

ինքն ինքնին կուտան քննադատութեան մը զոր պիտի համար-
ժակիմ որակել «Ամենաբարձր Քննադատութիւն»։ Ասոնք կը
ստիպուին ընդունիլ թէ Յաղթական կեանքը սուրբգրային է,
սակայն յայտնի կերպով կ'ըսեն թէ այդ կեանքը ասորի կարե-
ւի չէ։ Ասոնք Աստուծոյ խօսքին ճշմարտութիւնը չեն ուրա-
նար, բայց լռելեայն կը հաւատան թէ անգործագրելի է։
Երանի՛ թէ Քրիստոսը Իր խօսքովը փորձէինք։ Երանի՛ թէ պարզ
մանկան հաւատք ունենայինք Աստուծոյ վրայ։

Բացատրենք թէ ինչ ըսել կ'ուզենք «Ամենաբարձր Քննա-
դատութիւն» ըսելով։ Ամենաբարձր քննադատութիւն կը կո-
չենք բացարձակապէս մերժել հաւատալու թէ Աստուծոյ բոլոր
պատուէրները կատարել կարելի է։ Այն ուրախութիւնը որ
անբաժան է Յաղթական կեանքէն, կը կայանայ Քրիստոսը Իր
խօսքով փորձելուն մէջ։

Առենք այս որոշ հրամանը՝ «Բանի մը համար հոգ մի
ընէք»։ (Փիլ. Դ. 6)։ Կը հնազանդի՞նք ասոր։ Կը հաւատա՞նք
թէ Աստուծոյ կամքն է որ երբեք հոգի մտածում մը չանցնի
մեր մտքէն։ Շատ քրիստոնեաներ պէտք է տրամուծեամք խոս-
տովանին թէ իրենք ամէն բանի համար հոգ կ'ընեն։ Քանի մը
տարի առաջ նշանաւոր բժիշկի մը գացի, որպէսզի զիս քննէ։
Բժիշկին գաղափարն էր թէ սիրտս չափէն աւելի յոգնած էր
եւ երկայն հանգիստի մը անհրաժեշտ պէտքն ունէր։ Դէպքերը
վերջը ցուցուցին թէ բժիշկին կարծիքը սխալ էր, սակայն անի-
կա աշխատէ արտայայտուած միջոցին, որոշապէս հոգի նշաններ
նշմարած ըլլալու էր դէմքին վրայ, վստիկ իր խօսքը շարու-
նակելով ըսաւ՝ «Կը թուատրէ՞ք ինծի դիտողութիւն մը ընել
կրօնականներու մասին։ Շատեր կուզան ինձմէ քննուելու,
սակայն կը տեսնեմ թէ դուք, կրօնքի առաջնորդներդ, ճիշդ-
նոքբան հոգ կ'ընէք ձեր մարմիններուն համար, որքան կ'ընեն
անոնք որ որեւէ կրօնքի չեն հաւատարմ։ Ի՞նչ յանդիմանու-
թիւն։ Դաւապարտուած կը կենայի հոգի արտայայտութիւնը դէմ-
քին վրայէն չէր հեռանար։ Ինչո՞ւ։ Պարզապէս անոր համար
որ տակաւին անծանօթ էի Քրիստոսի իմ մէջս բնակելու գաղտ-
նիքին։

(Շար.)

ՈՉ ԳՆԱՀԱՏԵԼԻ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

«La Prensa» Պուէնէս Այրէսի անուանի թերթը,
31 Մարտ թուոյն մէջ հետեւեալ հեռագիրը կը հա-
ղորդէր. «Հոգով, Մարտ 30.— Իտալական Երիտասարդ
Կաթոլիկ Միութիւնը հրաւիրած է իր անդամները
ձխախոտ ձխելէ դադրիլ Աւագ Ուրբաթ օրը իբր սուգ
եւ զոհողութիւն Յիսուս Քրիստոսի մահուան տարե-
լիցին առթիւ»։

Սուրբ Պօղոս, հեթանոսաց մեծ առաքեալը քրիս-
տոնէից մրցման մասին խօսելով կ'ըսէ, «Եւ ամէն ով
որ կը մրցի, ամէն բանի մէջ չափաւորութիւն կը պա-
հէ, անոնք եղծանելի պսակը առնելու համար եւ մենք
անեղծանելին»։ Ա. Կորնթ. Թ. 25։ Այն որ ճշմարտապէս
կը սիրէ զՔրիստոս, պէտք չունի նիւթական զոհողու-
թեան, մանաւանդ այնպիսի բանի մը համար որու
վնասը առողջութեան եւ զրպանին կը հասնի։ Իտա-
լական Երիտասարդ Կաթոլիկ Միութիւնը պէտք էր
գիտնար բնաւորութեան զսպելու կերպը Քրիստոսի

սիրոյն համար եւ ըսէր առաքեալին հետ, «Բայց ինչ
որ ինծի շահ էր, զայն Քրիստոսի համար վնաս սեպե-
ցի, եւ իրաւ բոլոր բաներն ալ վնաս էր սեպեմ իմ
Տէրոջս Յիսուս Քրիստոսի գերազանց գիտութեանը
համար, որուն համար ամէն բանէն զրկուեցայ եւ աղ-
տեղութիւն կը սեպեմ, որպէսզի Քրիստոսը շահիմ»։

Վերոյիշեալ թէլէկրամը ինծի երկու բան մտածել
տուաւ տխրութեամբ՝ թէ շատ մը անուանական քրիս-
տոնեանեղ կան, որոնք Հոգովէն եկած հեռագրին
համաձայն տօնական օրերու զոհողութիւնով մը բա-
ւական կը սեպեն քրիստոնէական վսեմ կենցաղավա-
րութիւնը, մտածելով որ ատով Աստուծոյ ընդունելի
պիտի ըլլան։ Իրաւ զոհողութիւններ, ծումապահու-
թիւններ գնահատելի եւ լաւ բաներ են եւ սակայն
եթէ անոնք միայն հեռագրական հրամանով մը ըլլան
ու ոչ թէ ներքին համոզումով ու որպէս ներքին
կեանքի արտայայտութիւն, անոնք պօզալի ու զգուե-
լի են Աստուծոյ։ Անիկա կ'ըսէ. «Այ ինծի ունայն ըն-
ծաներ մի՛ բերէք, ձեր խոնկը ինծի պիղծ է... Ձեր
տօնախմբութիւնը անգամ անօրէնութիւն է, վերցնե-
լէն յոգնեցայ, վստիկ ձեռքերնիդ արիւնով լիցուն է։
(Կարդա Եսայ. Ա. 10-15)։

Արդ, ձեռքերու արիւնը մաքրել հարկ է, մեղքը,
սրտի ամբարտաւանութիւնը, անհաւատութիւնը։ Ան-
կէ վերջը միայն արտաքին զոհողութիւններ ալ ըն-
դունելի եւ հաճելի են Աստուծոյ։

Իսկ եթէ ձխախոտը քրիստոնէի մը համար ան-
պատիւ բան մըն է, ինչ որ շիտակ է, ուստի միայն
մէկ օրուան դադարը որքա՞ն ծաղրելի զոհողութիւն
մըն է։ Զայն կատարելապէս ձգել պէտք է եւ կարելի
է։ Ատկէ ազատուելու համար միայն Քրիստոսի նայիլ
հարկ է, մեր հաւաքի առաջնորդին ու կատարողին,
որ այն ուրախութեանը համար որ Իր առջեւ կեցած
էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց ու Աս-
տուծոյ աթոռին աջ կողմը նստաւ։ (Եբր. ԺԲ. 2)։

Այն որ այս սողերը կը գրէ, (եւ այն որ կը թարգ-
մանէ) կը խորհի՞ն՝ թէ եւ մարդկային տեսակէտով ան-
կարելի է ձգել վերոյիշեալ ախտը, քայց եւ այնպէս
տեսնելով մեծ առաքեալ Պօղոսն ալ որ Քրիստոսը
օրինակ ունենալով ձգեց անտեղի եւ անօգուտ աշխար-
հային բաները Քրիստոսի սիրոյն համար, իրենք ալ
ձգեցին այդ ախտը եւ այն օրէն ի վեր շատ զոհ են եւ
ուրախ։

Ո՛վ ընթերցող եղբայր, ջանք մը եւս ըրէ երբ սոյն
տողերը կը կարդաս, նոյնիսկ Աւագ Ուրբաթ ալ եթէ
չըլլայ ու մաքրէ քու սիրտդ եւ Քրիստոսի յանձնէ
զայն կատարելապէս, ու Անիկա միայն պիտի օգնէ
քեզի մէկէն ձգելու այն ունակութիւններդ, որոնց ղէմ
տարիներով մաքառեցար ու չկրցար ձգել։

Ամէն բանի կարող եմ ԱՆՈՎ, որ զիս զօրացուց։

31 Մարտ 1928

Ա. Բէշէճեւ

Ազատ թարգմ. սպաներէնէ

ԽԱՉԻՆ ՆԱՅԷ

Երբ տխրութեան մութ ստուերներ
Գան պատելու հոգւոյդ արփին
Եւ մորկիներ խիստ մոլեգին
Ալեկոծեն աշխարհդ ներքին,
Աչքերըդ բա՛ց, ո՛վ մարդ իսկոյն
Խաչին նայէ Աստուածորդւոյն:

Երբ փորձութեան որոգայթներ
Հարուած ըլլան հոգւոյդ առջեւ
Եւ վտանգներ մեծ բազմաթիւ
Քեզ պաշարեն գիշեր ու տիւ,
Աչքերըդ բա՛ց, ո՛վ մարդ իսկոյն
Խաչին նայէ Աստուածորդւոյն:

Երբ քու տածած մեծ մեծ յոյսեր
Պարպակել են, մոխիր դառնան,
Եւ երազներ քու սիրական
Չքեզ լքեն, քեզմէ խոյս տան,
Աչքերըդ բա՛ց, ո՛վ մարդ իսկոյն
Խաչին նայէ Աստուածորդւոյն:

Երբ կասկածի սուր սլաքներ
Հոգւոյդ ներսը խորունկ խոցեն,
Եւ շշուկներ տարակոյսին
Խեղդել ջանան յոյսը սրտին,
Աչքերըդ բա՛ց, ո՛վ մարդ իսկոյն
Խաչին նայէ Աստուածորդւոյն:

Երբ քու գործած անթիւ մեղքեր
Ուսիդ վրայ գրեզ ճնշեն,
Եւ մահ, սարսափ, խայթը խղճին
Ալեկոծեն քու խեղճ հոգին,
Աչքերըդ բա՛ց, ո՛վ մարդ իսկոյն
Խաչին նայէ Աստուածորդւոյն:

Եւ վերջապէս երբ քու քայլեր
Կը մօտենան գերեզմանին,
Եւ տագնապներ տառապագին
Մահուան ժամըդ փութացնեն,
Աչքերըդ բա՛ց, ո՛վ մարդ իսկոյն
Խաչին նայէ Աստուածորդւոյն:

Երբ հաւատքի աչքով նայիս
Աստուածորդւոյն խաչը տեսնես,
Այնուհետեւ մի՛ կասկածիր,
Իսկոյն փրթին մեղքիդ կապեր,
Ամէն ցաւեր, ամէն վշտեր
Անհետանան, վստահ եղիր:

ԼՌԻԿ ՊԱՏԳԱՄՆԵՐ

(Տասնըվեցերորդ դարու սուրբ Հայրապետներէն)

Ի՛նչ տառապալի անցքեր տեղի պիտի ունենային,
Եթէ այս պահուս յանկարծ մեռնէինք, քանզի ի՛նչ
համար ունիս տալու հանդէպ այն շնորհքներուն ու
ողորմութիւններուն, որ անդադար ստացար Աստուծ-
մէ, եւ ի՛նչ համար քու ընկերներուդ կորստեան, որ
քու ձեռք կատարուեցան:

Ահարկու է այնպիսոյն վիճակը, որ այդ համարա-
տուութեան անձն ի մտի ունենալով Աստուծոյ ատեա-
նին առջեւ պիտի ներկայանայ: Մահը դարանալալ է
իսկոյն յարձակելու, իսկ Աստուած որ այսօր կը ներէ,
վաղուանը չէ խոստացած:

Այնպիսի կեանք պէտք է վարել որ մահուան
հանդէպ անդադար պատրաստութիւն մը ըլլայ, քնաւ
օրինաւոր չէ մէկ վարկեան իսկ յետաձգել փրկու-
թեան այնքան կարեւոր հարցը, քանզի վերջին պա-
հուն անօգուտ է ամէն ջանք, վասնզի վերջին ժամը
անյայտ է մեր աչքերուն, եւ որուն համար պատրաստ
ըլլալու էինք:

Մահը մենէ բացակայ ըլլալով միշտ հեռու կը
կարծենք, մինչդեռ անիկա մեր ետեւէն կուգայ եւ
յաճախ առանց խտիր դնելու հասակի կամ սեռի ու
ցեղի, անակնկալօրէն կ'առնէ, կը տանի:

Ով որ կ'ուզէ լաւագոյն մահով մեռնիլ, պէտք է
այժմէն մեռնի եւ օրըստօրէ ինքզինքը մահուան
պատրաստէ, քանզի երբ օրհասը կուգայ, ոչ ոյժ կը
մնայ ու ոչ զգայութիւն:

Մենք ոչինչ այնքան հեշտ կը դիտենք մեր կեան-
քին մէջ որպէս այդ սոսկալի յապաղումը: Ուստի
արդար է Աստուծմէ եկած պատիժը, վասնզի չկամե-
ցար երբ կարող էիր եւ չպիտի կարողանաս երբ կա-
մենալ ուզես:

Թարգմանաբար

3.

ՇՈՂԵՐ

Աստուծմէ վախցիր՝ Իր զօրութեանը համար, Իրեն
ուպաւինէ Իր բարութեանը համար, զԻնք փառաբանէ՝ Իր մե-
ծութեանը համար, Իրեն հաւատա՝ Իր անդամ վստահութեան
համար ու զԻնքը պաշտէ Իր սրբութեանը համար:

Դաշտին կանանչը, Լեռան ծառը կ'օրհնեն զԱստուած:
Փիղը արեւուն ծագելուն զԻնքը կ'ողջունէ, սողունը Անոր
ճառագայթին մէջ կը շարժի, թռչունը՝ տերեւներուն մէջ
զԻնք կ'երգէ, որոտումը երկնից մէջ զԻնք կը փորձէ,
Ովկիանոսը՝ Անոր մեծութիւնը կը յայտնէ: Միայն յիմար
մարդն է որ կ'ըսէ «Աստուած չկայ»:

Պերլին

(Վեր.) ՏէՐ ՍԱՀԱԿԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ԲՐՈՖ. ՎԵ. ՊԵՏԷՐՍ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

Ե. ԴԼՈՒՆ

ՅԱՄԱՐԸ ԵՒ ԾՈՂԸ

«Աստուած ըսաւ, երկինքի տակ եղած ջուրերը մէկտեղ ժողովին ու ցամաքը երեւնայ, եւ այնպէս եղաւ: Եւ Աստուած ցամաքին Դնուներ երկիր դրաւ ու ջուրերուն ժողովքը ծովը կոչեց, եւ Աստուած տեսաւ որ բարի էն» (Ծննդ. Ա. 9, 10):

Այս համարներէն կը հասկնանք թէ երկրի մակերեսը երբեմն հարթ հասարար էր ու ջրով ծածկուած, բայց յետոյ լեռներ բարձրացան եւ ծովուն յատակը ցածցաւ: Աստուածաշունչին այս տեսութեան համաձայն են նաեւ քնագէտները, որոնք կը սորվեցնեն թէ երկրագունդը ամէն տեղ նախ միեւնոյն խորութեամբ ջրով ծածկուած էր, սակայն յետոյ լեռները կազմուեցան ու ցամաքը երեւան եկաւ: Եւ այս յառաջ եկած է հետեւեալ կերպով.— երկիրը նախ լայն ու հրաշէկ գունդ մըն էր: Երբ ան հետզհետէ պաղեցաւ, իր մակերեսին վրայ բնականօրէն կազմուեցան կեղեւ. մը, որ քանի թանձրացաւ այնքան աւելի կծկուեցաւ ու փոթեր գոյացուց, ինչպէս կը պատահի տաք կաթին վրայի սերին, երբ անկիւ պաղի: Եւ այս փոթերը համապատասխանելով երկրագունդի մեծութեան՝ առաջին բլուրներն ու լեռներն էին: Ուստի Սուրբ Գրքին մէջ չըսուի «Աստուած ցամաքը ստեղծեց», Թապա՝ ճամաքը երեւնայ: Ասոր բնական հետեւանքն եղաւ ջուրերուն հաւաքուիլը խոր տեղերու մէջ, որով ծովն ու ցամաքը գոյացան:

Ուրեմն հոս, երկրի ստեղծման պատմութեան մէկ կարեւոր մանրամասնութեան մէջ ալ կատարեալ համաձայնութիւն կը տիրէ Սուրբ Գրքի ու գիտութեան միջեւ: Բայց աւս բոլոր չեղան իրենք իրենցմէ, (ինչպէս կը խորհին Ռարբիջն Ռարցոզն, բայց հապա Աստուծոյ արարչական խօսքովը եթէ Ան հրամայած չըլլար, դեռ հիմա ալ «երկիրը անձեւ ու պարսպ» մնացած պիտի ըլլար եւ լեռները անգոյ: Միայն Աստուծոյ հրամանովն էր որ բոլոր բնական ուժերը, զորս Հոգին դրած էր նիւթին մէջ, գործեցին նախագծուած ծրագրին համաձայն եւ երկրի զարգացումը քայլ մը եւս յառաջ մղեցին: Հրեշտակներն ու Աստուծոյ երկնային զաւակները լսեցին արարչական այդ խօսքերը, բայց մենք բան մը չգիտի լսէինք, եթէ այն ատենն ալ իբր մեղաւոր մարդիկ երկրի վրայ բնակէինք: Երկրաւոր կոյր միտքը այն ժամանակ ալ ստեղծագործութեան մէջ միայն բնական զարգացում, միայն բնական ուժերու գործունէութիւն պիտի տեսներ, ինչպէս որ այսօր զԱստուած չճանցող շատ մը գիտուն եւ ազէտ մարդիկ կը տեսնեն, եւ փոծորիկի, մրրիկի, երկրաշարժի եւ այլնի ետեւը սոսկ կոյր պատահար կը գտնեն:

Արդարեւ անոնք, «Տէրոջ այդ լեռները», Աստուծոյ մեծ գործն են, քանզի անոնք մասնաւոր իմաստով Տէրոջ գործն ինչն ու փառքը կը սլառմեն: Մենք չենք կրնար բմբռնել լեռան մը մեծութիւնը, անոր պարունակած միլիառաւոր խորանարդ մէծր հողը, քարերը, ապառաժները: Ով որ ծանօթ է Ալպեան լեռնաշղթային, ով որ ժամերով տքնած է՝ անոր գագաթներէն միոյն վրայ բարձրանալու, ով որ այդ բարձրութենէն դաշտը դիտած ու նկատած է թէ ինչպէս ընդարձակածաւալ անտառներ փոքր պարտէզներու եւ լայն գետեր արծաթեալ թելերու նման կ'երե-

ւին, ան կրնայ մասամբ հասկնալ թէ ինչ է լեռը: Անգլիացի ծանօթ գրող մը, Քլեմէնս, անգամ մը ըսած է թէ ինքը Աստուծոյ մեծութիւնն ու կարողութիւնը առաջին առթիւ այն օրն ըմբռնեց, երբ իր կալուածին վրայի մէկ փոքր հողակոյտը վերցնել կ'ուզէր: Մինչ շատ մը աշխատաւորներ երկար օրեր սայլակներով հող կը կրէին, խլուրդի այդ բոյնը դեռ չէր անհետանար: Շատ մը լեռնաշղթաներ, կը խորհէր ան, ինչպէս Ալպեան ու Հիմալայա՝ մինչեւ երկինք կը բարձրանան եւ ուրիշներ, ինչպէս Ամերիկայի Անտեանները՝ հազարաւոր մղոն երկարութիւն ունին, այն ատեն միայն տեսաւ թէ մարդը որքա՞ն պզտիկ է եւ Աստուծոյ գործը որքա՞ն մեծ:

Արդեօք որպիսի՞ տեսարան մը պարզուեցաւ, երբ առաջին լեռները կազմուեցան: Երկրի մակերեսը ո՞չ թէ միայն բարձրացաւ ու ցածցաւ՝ ծովու մը նման, հապա նաեւ պատռեցաւ եւ դուրս ցայտեց լաւալի, հալած քարերու, վիժխարի կոյտ մը: Այդ երևույթներու նկատմամբ այժմ կը վկայեն շատ մը լեռներ, որոնք անվիճելիօրէն նման հալած քարերէ յառաջ եկած են, ինչպէս նաեւ ներկայիս գոյութիւն ունեցող 500 գործոն (ջմարած) եւ հազարաւոր մարած հրաբխականները, մասնաւորապէս Ամերիկայի Անտեանները՝ իրենց բազմաթիւ հրաբխականներով: Այդ լեռնաշղթան ուրիշ բան չէ, եթէ ոչ սպին մեծ պատռածքի մը, որ ատենօք բացուած է երկրիս կեղեւին վրայ եւ որմէ լաւան յորդեր ու կարծրանալով լեռներ կազմեր է: Ուստի ո՞չ թէ միայն բանաստեղծական արտայայտութիւն մը, հապա նաեւ տառական ճշմարտութիւն մըն է, երբ Սաղմութիւն մէջ կ'ըսուի, լեռները «Տէրոջ առջեւ մեղրամամի պէս կը հալին»: Եւ կ'ըսենք թէ լեռներու ձեւաւորումը այսօր ալ դեռ վերջացած չէ: Թէեւ ոչ առաջուան նման վիժխարի ծաւալներով, բայց գոնէ փոքր չափով մը հիմա ալ «լեռները կը բարձրանան ու ձորերը կը ցածնան» (Սաղմ. ձԳ. 8, նոր Թարգմանութեանց համաձայն): Այսպէս 1707 ին ստորերկրեայ կրակին ուժովը Միչիգանական ծովու մէջ, Մանիթորին կղզւոյն քով նոր կղզի մը երեւան եկաւ, որ 5 մղոն շրջապատ եւ ծովէն 40 ոտք բարձրութիւն ունէր: Խաղաղական Ովկիանոսի շատ մը կղզիներն ալ ուրիշ բան չեն, եթէ ոչ ծովէն կամաց կամաց դէպի վեր բարձրացող հրաբուխի խառնարաններ: Դեռ 1734 Սկոտլանդի 29 ին էր որ երկրաշարժի մը ատեն, երբ երկրի մակերեսը այնչեղ ծովու մը նման կը շարժէր եւ բոցեր կը ժայթքէր, Միքսիքայի մէջ մէկ օրէն գոյացաւ լեռ մը, որուն տարածութիւնը չորս քառակուսի մղոն էր եւ բարձրութիւնը 1600 մէթր: Այդ ժօրիւս կոչուած լեռը այսօր իսկ կը կենայ եւ իր գագաթէն հրաշէկ լաւա կը հոսեցնէ: «Ձորերու ցածնալուն» նկատմամբ ալ հետեւեալը լաւ օրինակ մըն է.— Ասկէ 48 տարի առաջ ձաւա կղզւոյն քով խլացուցիչ երկրաշարժով արմուկէ մը յետոյ սկսաւ մոխիրի անձրեւ տեղալ երեք օր արեւը ծածկուեցաւ: Ամէն բան հանդարտելէ ետք տեսնուեցաւ որ կղզի մը՝ բարձր լեռով մը միասին՝ մեծ մասամբ ծովուն խորը ընկղմած է:

Եթէ համեմատաբար միայն փոքր լեռան մը ձեւաւորմանն ու աներեւութացմանը այդքան սոսկալի բներեւոյթներ կ'ընկերանան, եթէ վերստին նման միակ փոքր հրաբուխի մը կրնայ իր մոխիրը մինչեւ Ափրիկէ խրկել եւ եթէ ուրիշ հրացայտ լեռ մը կրնայ զարհուրելի ցնցումներ յառաջ բերել՝ նոյնիսկ հարիւրաւոր մղոն հեռու գտնուող ցամաքամասերու վրայ, արդեօք որպիսի՞ ահռելի տեսարան մը պարզուեցաւ, երբ երրորդ օրուան մէջ Աստուծոյ հրամանին վրայ ամբողջ ցամաքը իր հազարաւոր հրաբուխներովը միասին՝ խորունկէն դէպի վեր կը

բարձրանար եւ լեռներ ու բլուրներ կ'ոստոտէին գաւառակի նման: Զուրի ու կրակի այս տիրանական կռուի ատեն, որչա՛փ Թանձր ծուխով ու բոցով ծածկուած ըլլալու է երկիրը: Այո, լեռները Աստուծոյ գեղեցիկ ու մեծաքանակ ստեղծագործութիւնն են, ուստի սաղմոսներգուները չեն յոգնիր գովարանելէ անոնց վսեմութիւնն ու փառքը: Աստուած ալ նուիրագործած է անոնց գագաթները, որոնք բարձր ու խիզախ՝ մաքուր օդին մէջ կը բարձրանան՝ յաճախ յաւիտենական ձիւնի սառնով ծածկուած: Լեռան մը վրայ զոհելու էր Արրաֆամ իր մէկ հատիկ որդին, լեռան մը — Սինայի կրանիդեայ վեհափառ գագաթին վրայ իշաւ: Աստուած, իր ժողովուրդին օրէնք տալու լեռան մը վրայ մեռաւ: Մովսէս եւ Թադուեցաւ: Տէրոջը կողմէն. լեռան մը վրայ եղիա հաւաքեց իսրայէլը եւ երկինքէն կրակ տեղացոյց: Դարձեալ լեռան մը վրայ տուաւ Յիսուս իր առաջին քարոզը եւ աղօթքով անցուց շատ գեշերներ, լեռան մը վրայ այլակերպեցաւ, լեռան մը վրայէն դէպի երկինք համբարձաւ, եւ իր երկրորդ գալուստին ատենն ալ իր ոտքերը Զիծենեաց Լեռան վրայ պիտի հանգչին: (Ջաք. ԺԳ. 4):

Լեռան լուսաւոր բարձունքին կը հակադրուի խորհրդաւոր մութ խորութիւնը, ծովը, որ ատենօք ամբողջ երկիրը կը ծածկէր եւ հիմա ալ անոր երեք չորրորդ մասը: Առեղծուածային աշխարհ մըն է ծովը: «Ծովը մեծ ու լայն է, հոն անձիւ սողացողներ, պզտիկ ու մեծ կենդանիներ կան, հոն նաւերը կը քալեն, եւ Լեւիաթան, զոր անոնց մէջ խաղալու համար ստեղծեցիր» (Սաղմ. ԺԳ. 25, 26): Եւ աւելի խորը, սառնային լուսնեան ու յաւիտենական խաւարին մէջ հազարաւոր տարիներէ ի վեր կ'ապրին միլիոնաւոր կենսաւորներ, զորս մենք չենք ճանչնար եւ որոնց կեանքի նպատակը չենք կրնար գուշակել: Մութ, համայնական ուժ մըն է այս ծովը, որու մեծ յորձանքները նման վիթխարի գետերու, ցամաքամասերուն եզերքները քերելով՝ յաւիտենական պտոյտներով բեւեռէ բեւեռ կը հոսին: Ատենօք ան կ'լանած է նախաջրիեղեղեան ամբողջ մարդկութիւնն ու կենդանական աշխարհը. եւ հիմա ալ ամէն տարի, նոյնիսկ ամէն օր կ'անյայտացնէ խոշոր ու մանր նաւեր ու անոնց նաւորները: Իր յատակին վրայ ի՛նչ բան գտնել կարելի չէ, — խորտակուած նաւեր, գանձեր, մարդու ոսկորներ եւայլն եւայլն:

Ինչպէս որ լեռը հոգիին դէպի լոյս բարձրացմանը՝ այնպէս ալ ծովը կը համապատասխանէ անոր անկմանը՝ փորձութեան մութ վիճերուն մէջ, ուր անխիակ Աստուծոյ դէմքն ու լոյսը չը կրնար տեսնել եւ ստիպուած է աղաղակել Յովնանի նման. «Զիս ծովերուն մէջ, անդունդը նետեցիր, ու հեղեղները զիս պաշարեցին, Բոս ամէն կողմէն: Եւ ալ իմ փրկիչս անցան: . . . Բայց Դուս իմ կեանքս գութէն հանեցիր, ո՛վ իմ Տէր Աստուածս» (Յովնանու. Բ. 3, 6): Քրիստոս ալ նոյնպէս ստիպուեցաւ. «Իմ մեղքերուն պատճառաւ մահուան ու դժոխքի խոր անդունդներն իջնել: Ինչպէս Յովնան երեք օր ու երեք գիշեր կէտ ծուկին փորին մէջ էր, այնպէս Որդի Մարդոյ պիտի ըլլայ երկրի սրտին մէջ երեք օր ու երեք գիշեր» (Մատթ. ԺԲ. 40):


Դատաստանին օրը, երբ բոլոր ծածկուած բաները Աստուծոյ անոռնի առջեւ գան, «Ծովն ալ իր մեռեալները դուրս պիտի տայ»: Այդ ատեն դուրս պիտի ելլեն այն միլիոնաւորները, զորս ջրհեղեղը կ'լանեց, ինչպէս նաեւ փարառնը ու իր պատեւրազմիկները եւ ուրիշ բազմաթիւ մարդիկ, որոնք ծովուն մէջ ընկղմեցան: Դատուելու համար անոնք լոյս աշխարհ պիտի գան՝ իրենց վիշտերովն ու մեղքերովը:

Բայց ատկէ ետքը վերածնած փառաւոր նոր երկրին վրայ «ալ ծով չկայ» (Յայտ. ԻԱ. 1): Ամէն կողմ միայն փրկեալներ պիտի բնակին:

(Շար.)

Թարգմ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ



ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏՈՐ ՍԻՆԿԶ.— Անցեալ ամիսներուն գրեցինք «Բանբեր» ընթանիքին թէ մեր Հնդկի եղբայրը 1929 Ապրիլին Թիպէթ գնաց աւետարանչական ճամբորդութիւն մը ընելու ու չվերադարձաւ: Ինքը Հետեւեալ կերպով արտայայտուած էր. «Եթէ Սեպտեմբերին չվերադառնամ, ալ զիս ողջ մի կործէք»: 22-րդներ եղան թէ Սատու Թիպէթի մէջ կամ Հիւանդութեան մը, կամ արկածի մը եւ կամ իր ոխերիմ թշնամիներուն — Լամաներուն զոհ գացած էր: Այս ատեն նամակ մը գրեցինք իր Հոռոյէին եւ պատասխանն ընդունեցինք ոչ թէ իրմէ, այլ Սապաթուի միսիոնարներէն մէկէն, որ կ'ըսէր թէ Սատու դեռ վերադարձած չէր Թիպէթէն եւ որովհետեւ Հիւմալայայի կիրճերը ձիւնէն բոլորովին փակուած էին, կարելի չէր ռեւէ խուզարկութեան մը ձեռնարկել, այսու ամենայնիւ կը գրէր միսիոնարը թէ չէր յոսար թէ Սատու ողջ ըլլար, բայց կը խնդրէր աղօթել անոր համար:

Այս տարի, երբ դարձեալ կիրճերն ու ճամբաները երթեւեկելի դարձան, Սապաթուէն մարդիկ հարց ու փորձի եւ փնտռողի ելան Սատուին ետեւէն եւ վերջապէս հասկցան որ անիկա գոլերային զոհ գացած է: Հաւանաբար այդ ահաբեկող համաճարակին բռնուողներուն օգնելու պահուն մեր եղբայրը հոն պարտականութեան պատենշէն վրայ ինկաւ: Յարգանք իր քաղցր յիշատակին:

Սատու ո'չ միայն Հնդկաստանի ժողովուրդին, այլ նաեւ Թիպէթի, Հնդկաստանի, Աֆղանիստանի, Պաղեստինի, Եւրոպայի ու Ամերիկայի շատ մը տեղերուն մէջ իր վկայութիւնը լսելի ըրած եւ շատերո՛ւ ալ փրկութեան կամ սրբացման առիթ տուած է: Նոյնիսկ մեր ազգին շատ մը զաւակները իր կենսագրութիւնը կարգաւորելու ազդուեցան, որոնցմէ մին է սոյն տողերը գրողը ու գիտէ որ շատեր ալ նոր կեանքի սկսան:

Ստորեւ կը գտնենք անստորագրելի նամակ մը, երեք տարի առաջ անձանթ եղբոր մը կողմէ գրուած, ինչպէս իմ նախնիքս Եւրոպայի շատ մը տեղերէն, ապա մ'աղթելով որ շատերուն ալ օգտակար ըլլայ սոյն պարզ վկայութիւնը:

Խորին երակստագիտութեամբ կուգամ յայտնել իմ անկեղծ շնորհակալութիւններս Անոր, որ Սատու Սոււտար Սինկի գրքին հայերէն լեզուի Թարգմանութեան համար Զեզ առաջնորդեց. փառք Անոր, յաւիտեանս յաւիտենից:

Յիւրաի ի՛նչ գերբնական ու գերփերոյ բան մըն է, որ Աստուծոյ սիրոյն խաղաղութիւնը մարդ Եակիս մէջ կը բնակի: Անհասկնալի ու անմեղմունքի դէպք մը, որուն կենդանի վիճակը հանդիսանայ Յիսուսի շատ սիրելի հնդկի մը, «Սատու Սոււտար ուխտաւոր մը», եւ ուրիշներ ալ . . .

Բոլորովին անակնկալի մը առջեւ գտնուեցայ երբոր «Սատու Սոււտար Սինկի» կենսագրականին հայերէն Թարգմանութիւնը տեսայ: Ասկից ամիսներ առաջ Սոււտարի մի քանի

դրուագները բերանացի լսած էի, եւ տեղեկացած էի թէ Ռեմբրանտի մէջ մաս առ մաս համառօտ կերպով հրատարակուած են, սակայն որքան որ ալ փափաքեցայ զանոնք ձեռք ձգել ու կարգաւ, բայց առիթներու անպատեհութենէն չկրցայ օգտուիլ անոնցմէ, եւ արդէն կարճատեւ ժամանակի մը հոլովոյթէն վերջ, բոլորովին յիշողութենէս բացակայ էր այդ անձնաորութեան հետաքրքիր կենսագրութիւնը: Այժմ դարձեալ զարմնումի զանգաւ մըն է որ կը հնչէ ականջիս, «Ահա՛ պատեհութիւնը եզտուելու համար, առիթը ձեռքէդ մի՛ փախցնէր»:

Նախ, իբր հետաքրքրական պատմութիւն մը սկսայ կարգաւ, մի քանի էջերու թղթատումէն վերջ, գիտակցութիւնս սնտկած էր, կը հասկնայի թէ ինչ կը կարգաւ, այլեւս լոկ հետաքրքրութեան մը արդիւնքը չէր կարդալուս պատճառը, այլ զգաստացած՝ դէպքերուն ու պատկերներուն կը հետեւէի: Ձէի գիտեր թէ մի քանի վայրկեաններու տեսողութեան մէջ էջերը ինչպէս խոյս կուտային ագրիս առջեւէն, որչափ որ ընթերցումիս հետեւեցայ, այնքան կարդալու փափաքը մէջս արմնացաւ, կը կարդայի . . . բայց կը տեսնէի նաեւ պակասութիւններս ու շատ կ'ամբնայի փրկելիս առջին: Ու կամայ ակամայ հետեւեալ հարցումները կ'ընէի ինքսիրենս. «Ինչո՞ւ Յիսուս ինքզինքը այդքան բացորոշ կերպով ոմանց կը յայտնէ, եւ ոմանց առջեւ ալ քողարկուած կը կենայ. ինչո՞ւ կուպաշտ մը զինքը առեւի լիցունութեամբ կը վայելէ ու եւս ո՛ր. ինչո՞ւ անոնց կենսքին գրեթէ մէն մի վայրկեանը այդքան խաղաղութեամբ եւ ուրախութեամբ կ'անցնի, բայց իմինս ջանցնիք, ինչո՞ւ ուրիշներ Անոր հետ այսքան առեւի մօտէն յարաբերութեան մէջ կը մտնեն, բայց իմ ու իր մէջ գրեթէ միշտ պատուար մը կայ. ինչո՞ւ անոնց առօրեայ կենսքը գրեթէ փառաբանութիւն, գոհմանակութիւն ու սէր է, բայց իմինս ո՛ր: Եւ այսպէս շատ մը ինչոնեւրո՞ւ մէջ խորատուութեամբ, պատասխանի կը սպասէի, սակայն քիչ մը առեւի ուսում նստիւթելով տեսայ թէ, դարձեալ դժուարութիւնը իմ մէջս էր, ո՛ր թէ Յիսուս չուզէր զիս ալ այդպէս ընել, բայց եւ Անոր կատարելապէս ամբողջ էութեամբս չէի նուիրուած:

Տարիներէ իվեր քրիստոնեայ — հոգեւոր յարկի մը մնուորտին մէջ ապրած էի, սակայն ազդեցութիւն մը չէի կրած, չէի ներգործուած, քիչ յետոյ Հոգին զիս ալ այցելելու եկած էր, սակայն չէի հնազանդած Անոր, Ան որքան որ յայտնի կերպով սկսած էր վրաս գործել, նոյնչափ ալ սիրտս կը կարծրանար. վերջապէս Սուրբ Հոգւոյն զօրաւոր մէկ այցելումով, նախնական քայլ մը կրցայ առնել, բայց քիչ վերջը միջավայրիս փոփոխութեամբ դարձեալ կենսքի մեղկութեան մէջ ինկայ: Տէրը այս վիճակէս գոհ չէր, եւ ուրիշ առիթով մը զիս նորէն կանգնեց. բայց կենսքիս մեղկութիւնը իր ընծացքը փոխելու համար միտ չէր: Նա արկածով մը զիս այցելեց, բայց իզո՛ւր որ եւ նեղութեանց մէջ անգամ իր քաղցր բարեքները միշտ կը վայելէի, սակայն կատարեալ նուիրման հոգին ու յօժարակամութիւնը չունէի. միշտ գա՛ղջ ու թո՛յլ վիճակի մէջն էի . . .

«Գիտեմ քու գործերդ, որ ոչ պաղ եւ ու ոչ տաք, երանի՛ թէ պաղ ըլլայիր կամ տաք: Ուստի դուն որ գաղջ եւ, ու ոչ տաք՝ ոչ ալ պաղ, քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ:

Կարդացի՛ . . . սա դէպքն ալ ինձ ըսելու բան մը ունէր: Սուստարի Հիմալայան գետերէն մէկուն մէջէն հանած քարին դէպքը զիս ա՛լ առեւի զգաստացուց. խորհեցայ թէ այդ քարը անշուշտ, նախ այդքան կտր ու գեղեցիկ չէր գետին մէջ, սակայն ժամանակի ընծացքին մէջ գետին ալիքները անոր վրայէն անցնելով, անոր խորտուքորտութիւնները մաշեցուցած ու այդ-

քան յղկած եւ ձեւաւոր վիճակի մը բերած էին, թէպէտեւ ջուրին խոնաւութիւնը անոր մէջ չէր թափանցած. անհասկի եւ ալ տարիներէ իվեր էր որ հոգեւոր հեղեղի մէջ կը գտնուէի, բայց . . . իմ վրաս անհարթ ու անկոփ բաներ շատ կային:

Դարձեալ խորհեցայ թէ յանցանքը որո՞ւնն էր. ու տեսայ որ նորէն պատճառը եւ էի, ոչ թէ միջավայրի ինքիւր էր գործը, այլ իմ անտարբերութիւնս էր միմիայն:

Ահա՛, այս առիթով կը սնտկիմ, կը զգաստանամ ու կ'արմնամ:

«Արմնցիր, կ'անցնի գիշերը»,
Լերանց վրայէն գոչնն դէտերը,
«Երուսաղէ՛մ, շուտ արմնցիր»:

Ինքզինքս, իմ ներկայ վիճակովս եւ բոլոր թերութիւններովս ու պակասութիւններովս հանդերձ, Անոր սեղանին վրայ իբր կենդանի գոհ կը մատուցանեմ. Ան իր մաշող կրակի զօրութեամբը թո՛ղ վառէ իմ ամբողջ անհաճոյ գործերս ու բնառութիւններս, եւ թո՛ղ ընէ իրեն կենդանի վկայ մը . . .

Կը մաղթեմ որ, «Սատու Սուստար Սինկի» գրքին հայերէն թարգմանութիւնը ուրիշ շատ մը անհասանելի ու օգտակար ըլլայ իր մեղմ ու քաղցր, սակայն կշտամբիչ պարունակութեամբը, նամանաւնդ մեզի, հայ քրիստոնեաներու համար:

«Տէրը պիտի գործէ ինձի համար:

Ով Տէր, Գու ողորմութիւնդ յաւիտեան է:

Գու ձեռքիդ գործերը երեսէ մի ձգեր:

«Հաւատարիմ է ան, որ ձեզ կանչեց,

որ պիտի կատարէ ալ»:

«Ան որ ձեր մէջ բարի գործ մը սկսեց, միջնեւ Յիսուս Գրիստոսի օրը պիտի կատարէ»:

Ամէն Տէր Յիսուս, ամէն:

Յիսուսով եղբայրդ

.....

Մեր քով կան ոսկեզօծ Սուրբ Գրքեր, կաշեկազմ եւ ծայրերով, գրպանի համար: Իսկ միջակ ու վերաւոր իւրերով կաշեկազմ՝ կակուղ կամ զօրաւոր կողքով ու ամպիտի Սուրբ Գրքեր ոսկեզօծ կամ պարզ, կարելի է կարճ ժամանակամիջոցի մէջ հայթայթել, ապապրանքներ ընդունելի են:

Այսպիսի Սուրբ Գրքեր եւ հոգեւոր գրքեր ունենալ փափաքողներ թող հաճին զիմեւ Կիւլշան Պատագեանի, «Բանբեր»ի հասցէով:

.....

Սատու Սուստար Սինկի անցաւ յաւիտեանականութեան, անոր գիրքը թող խօսի քեզ ինչ որ ունիս, հեղ մըն ալ կարողա, ապա թէ ոչ զիմէ «Բանբեր»ի խմբագրութեան վերի հասցէով եւ զո՞հ պիտի մնաս: Դիւր Ձրանսայի համար 10 Ֆրանք, արտասահման 75 Սլինթ:

.....

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

.....

Տպգր. «ԲԱՆԲԵՐ»ի, 7, Բիւ Բաբեր